600.0467.27.12.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2023 թվականի №467-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №567-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի (այսուհետ՝ ԷՄՇ) առևտրային կանոնների 176.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) սպառման համակարգի ակտիվ հզորության յուրաքանչյուր ամսվա հաշվարկային մեծությունը 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմում է 4258.25 ՄՎտ,

բ) 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածի համար «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից Ընկերությանը առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկում ներառված է նաև Ընկերության սպառման համակարգի ակտիվ հզորության հաշվարկային մեծությանը (4258.25 ՄՎտ) համապատասխան երկրորդային և երրորդային պահուստն ապահովող էլեկտրական էներգիա արտադրող կայաններից հզորության գնման ծախսը, որն Ընկերությունը վճարում է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը վերջինից առաքվող էլեկտրական էներգիայի դիմաց վճարումներ կատարելիս,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածի համար Ընկերության սպառման համակարգի ակտիվ հզորության յուրաքանչյուր ամսվա հաշվարկային մեծությունը՝ 4258.25 ՄՎտ, իսկ վճարման ենթակա մեծությունը՝ 0 ՄՎտ:

2. Ընդունել ի գիտություն, որ 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածի համար ԷՄՇ կառավարման ծրագրում Ընկերության պրոֆիլում վերջինիս սպառման համակարգի ակտիվ հզորությունն ամրագրվում է 0 ՄՎտ, որը տվյալ ժամանակահատվածում կարող է ավելացվել ԷՄՇ առևտրային կանոնների 247-րդ կետով նախատեսված դեպքերում և կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սպառման համակարգի ակտիվ հզորությունը հաստատելու մասին» №567-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
27 դեկտեմբերի 2023թ.